Հռչակաւոր վանքը բոլորովին ամայի էր: Մի ալեւոր աբեղայ միայն կանգնած էր բակում, կուտ էր ձգում հաւերին, որ այդ միջոցին խմբուած էին նրա շուրջը:

Տեսնելով նորեկներին մօտեցաւ նա:

— Այդ ֆրանկները ինչո՞ւ են եկել, — մի կողմ տանելով, հարցրեց երիտասարդից:

— Ֆրանկներ չեն, — պատասխանեց երիտասարդը, — այդ պարոնը հայ է, ես նրան ճանաչում եմ... Դա այն մարդն է, որի համար մեռնելու ժամանակ լուսահոգին ասաց, թէ երբ գալու լինի, իմ իր,եղէնները նրան յանձնեցէք:

— Որտեղի՞ց են գալիս:

— Ամերիկայից: Նրա տիկինը ամերիկացի է:

Պարոնը նայում էր դէպի իր շուրջը: Շատ տարիներ առաջ տեսած փառաւոր վանքը այժմ նրա վրայ տխուր տպաւորութիւն էր գործում:

— Ինչո՞ւ այդպէս թշոառ դրութեան մէջ է այդ վանքը, — հարցրեց նա աբեղայից:

— Մի ժամանակ այդ վանքի սեղանատանը հարիւրաւոր միաբաններ ճաշի էին նստում: Հիմա ո՞վ է մնացել: Ես, այդ հաւերը, մէկ էլ այդ մարդը: — Նա ցոյց տուեց երիտասարդին: — Վանքի բոլոր հողերը խլեցին, մեզ թողեցին առանց կտոր հացի: Նստած, օրերով, ամիսներով նայում ենք դէպի դուռը, գուցէ մի մոլորուած ուխտաւոր ներս կմտնէ: Այն էլ չկայ: Ուխտ էլ չեն գալիս: Հաւատն ու ջերմեռանդութիւնը պակասել է: Եթէ հազարից մի անգամ մէկը ներս է մտնում, տուած արդիւնքը այնքան էլ չի լինում, որ գոնէ ապրել կարողանանք:

Գուցէ վշտացած աբեղան դեռեւս երկար կը շարունակէր իր գանգատները, եթէ նորից պարոնը քաղաքավարութեամբ չընդհատէր նրան, յայտնելով, թէ ինքը շտապում է եւ ուշանալու շատ ժամանակ չունի:

Նրանք մտան հանգուցեալի խուցը: Նա այնքան փոքրիկ էր, որ բոլորի համար տեղ չկար: Երեխաները մնացին դրսում, ման էին գալիս վանքի բակում:

Ամէն ինչ սովորական տեղումն էր. նոյն փայտեայ հասարակ մահճակալի վրայ դեռ տարածուած էր անկողինը, նոյն կաղնեայ գրասեղանը դրած էր նեղ լուսամուտի հանդէպ, իսկ նրա առջեւ դեռ կանգնած էր հին, գեղաքանդակ բազկաթոռը, որ միակ զարդն էր այդ տխուր բնակարանի: Գրասեղանի վրայ ածած թղթերը, ցամաքած կաղամարը, փետուրեայ գրիչները,